ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հուլիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-145-22.05.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 903 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-

145-22.05.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱ-ՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները:

Նախագծում ներկայացված չէ, թե մեկ ամսվա ընթացքում Ջրի ազգային խորհրդի նիստ չգումարելու դեպքում ինչ ընթացակարգով են տրամադրվելու Ջրի ազգային խորհուրդ ներկայացված ջրօգտագործման թույլտվությունները:

Բացի այդ, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել Ջրի ազգային խորհրդի գործունեության և լիազորությունների հետ կապված դրույթները, այդ թվում նաև նախագծով փոփոխության ենթարկվող՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը:

Ելնելով վերոշարադրյալից՝ կառավարությունն առաջարկում է ներկա փուլում ձեռնպահ մնալ փոփոխություններից և նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածները թողնել անփոփոխ:

9 հուլիսի 2019 թվականի N 903 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեի նախագահ Վարդան Մելքոնյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-145-22.05.2019-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 9
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-145-22.05.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 30-րդ հոդվածի 4-րդ պարբերության «կասեցվում է» բառից հետո ավելացնել «առավելագույնը մեկ ամիս ժամկետով՝» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Վերջին տարիներին բազմաթիվ են ջրօգտագործման թույլտվության համար դիմած անձանց բողոքները և դժգոհությունները առ այն, որ ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացը թափանցիկ չէ, մասնավորապես՝ այն անհարկի ձգձգվում է այն պատճառաբանությամբ, որ հայտը ներկայացվել է Ջրի ազգային խորհրդի քննարկմանը, իսկ վերջինս դեռևս իր դիրքորոշումը չի հայտնել:
ՀՀ Ջրային օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ ջրօգտագործման թույլտվության տրամադրման ժամկետը չի կարող 50 աշխատանքային օրվանից ավելի լինել: Սակայն, նույն հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը սույն Օրենսգրքով սահմանված լինելու դեպքում ջրօգտագործման թույլտվություն ստանալու հայտը ներկայացնում է Ջրի ազգային խորհրդի քննարկմանը: Այդ դեպքում հայտի քննարկման գործընթացի ժամկետի հաշվարկը կասեցվում է մինչև Ջրի ազգային խորհրդի դիրքորոշումը հայտնելը»: Գործող իրավակարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ ջրօգտագործման թույլտվության տրամադրման կամ մերժման 50 աշխատանքային օրվա ժամկետը Օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է կասեցվել անորոշ ժամկետով՝ մինչև Ջրի ազգային խորհրդը կարտահայտի իր դիրքորոշումը: Կարծում ենք, որ սա ուղղակի հակասում է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայր ձևավորելու նպատակին և իրավական որոշակիության սկզբունքին:
Ուստի, Նախագծով առաջարկվում է ՀՀ ջրային օրենսգրքում ամրագրել դրույթ առ այն, որ Ջրի ազգային խորհրդը իր դիրքորոշումը հայտնի առավելագույնը մեկամսյա ժամկետում:
Նախագծով առաջարկվող լրացումը թույլ կտա ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացը դարձնել ավելի թափանցիկ և հաշվետվողական, կապահովի իրավական որոշակիություն և կանխատեսելիություն, արդյունքում՝ ավելի բարենպաստ ներդրումային և գործարար միջավայր: